

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑՆԵՐՆԵՑ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆԻՆՔ.

Հայոց եկեղեցական պաշտօնեայք՝ Հայոց Ազգի համարիւն՝ համասեռ եւ հարազատ անդամներէն կրօնականան, հոգւով՝ սրտիւ եւ զգացմամբ Հայ են, Հայոցմէ եւ Հայոց մէջ սնած են, Հայոց դպրոցաց մէջ գտնուած եւ կարելի եղած ուսմունքը առած եւ հայկական դատտիրաւութեամբ կրթուած եւ զարգացած են, պաշտօն եւ պարտք ունին Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ եւ կրօնիս սպասահարկել, նախանձախնդիր պաշտպան եւ պահապան լինել, միանգամայն Հայ ազգութեան գոյութեան յարատեւ ասպնջութեան համար անձնանուէր եւ գլխաւոր պաշտօնէութիւնը ունին:

Չունին սորա այն դիրքը՝ ինչ որ պապաւաւան եկեղեցական պաշտօնեայք Գերմանացւոց՝ կամ Գաղղիացւոց՝ կամ Անգղիացւոց եւլն ազգաց մէջ ունին՝ ինչպէս որ կանխաւ քանիցս բարեպատեհ առիթ ունեցայ զայս առարկելոյ եւ բացատրելոյ, մանաւանդ զի վերջինքըն (պապաւաւան եկեղեց. պաշտօնեայք) միայն եւ մի միայն պապական եկեղեցւոյ եւ կրօնի վերաբերեալ պարտաւորութիւնք ունին այլ եւ այլ ազգաց մէջ, որոց մէջ շատ անգամ անխաիր՝ այլազգի եկեղեցական պաշտօնեայնեք եւս կրնան գտնուիլ:

Ուրեմն Հայոց եկեղեցականաց երաստանութեան կամ թէ դիմակաւոր մի քանի

դասալիք պարոնայից հասկացած բաւերով ասելով՝ արքունիքն ինչ կը նշանակեն եւ սէր կյանգին:

Ինչպէս յօգուածոյս սկիզբն համառօտեցի՝ Հայոց եկեղեցականաց պաշտօնէութեան պարտաւորութիւնք շատ պարզ եւ հանրածանօթ են. եթէ անձնական շահ եւ փառքն եւս փնառուի, իւրաքանչիւրն իւր կոչմանն եւ պարտուց անձնանուէր եւ հաւատարիմ լինելով կարող է աւելի լաւ եւ մեծ արդիւնքով շահուիլ եւ կրկնակի փառաւորուիլ՝ քան թէ անտարբեր կենալով կամ հակառակին մոլորուելով. ուստի սոցա ունեցած իրաւասութիւնքն կամ արտօնութիւնքն եւս իւրեանց գլխաւոր եւ սրբազան նպատակին միայն կ'վերաբերին և ոչ անյնականին:

Երբ Հայոց եկեղեցական պաշտօնէից ունեցած իրաւասութիւնք եւ պարտաւորութիւնք ոչ իրեանց անյնականին և ելն կ'վերաբերին՝ — մտնաւանդ եթէ վերաբերի եւս՝ անդ իսկական անձնական շահուէ պատճառոյ՝ փառաց եւ պսակաց մեծ բաժին չկայ, — հապա ո՞ւմ կ'վերաբերին:

Անշնչա Հայաստանեայց եկեղեցւոյն եւ ազգին:

Չեւք առէք գտնուած կանոնադրութիւնքը եւ արտօնագրերը՝ կարգացէք ուշի ուշով եւ առանց կրից, տարբերօտար եւ անհարազատ բան՝ նպատակ եւ ուղղութիւն կգանէք:

Ո՞չ ապաքէն Հայաստանեայց եկեղեցւոյ եւ Ազգի գոյութեան լծորդ է սոցա գոյութիւնը. անտի կճնանի եւ ինմին կյանգի. նովաւ կեսայ եւ նովաւ կյարա-

տեւէ, եւ կարող է առանց նորա ապրիլ կամ գոյութիւն ունենալ. ջնջէ Հայոց եկեղեցական պաշտօնէից իրաւասութիւնքը կամ արտօնութիւնքը, ջնջէ Հայոց եկեղեցական պաշտօնէութիւնը, ո՞չ ապաքէն ի միասին Հայոց եկեղեցւոյ եւ Ազգի գոյութիւնը եւս կիսամեղուի եւ կը ջնջուի: Վերջինը ունի՞ քաղաքական գրութիւն եւ գոյութիւն, չէ՞ որ տարածուած եւ հպատակ է ի Ռուսաստան, ի Թիւրքիա, ի Պարսկաստան, ի Հնդկաստան եւ այլ տեղերում. ո՞վ պիտի կառաւարէ եւ պաշտպանէ՞ երբ Հայոց եկեղեցական պաշտօնէութիւնն իրաւասութիւններ եւ արտօնութիւններ չունենայ եւ անգոյ լինի, չէ՞ որ տեղական իշխող կառաւարութեանց մէջ ի մի ձուլուելով կանհետանայ, եւ զայն կը զձանգասալիք գիմակաւորներն՝ որք թէեւ չնչին կուսակցութիւն կկազմեն՝ բայց զօրաւոր պաշտպանք ունենալոյ կասկած կտան եւ այնպէս չարաչար զինուած են եւ կջանան Հայոց եկեղեցական պաշտօնէից եւ սոցա արտօնութեանց եւ իրաւասութեանց դէմ, եւ չեն թողուր չարիք՝ զրպարտութիւնք եւ վայրապար անիրաւ թըշնամանք՝ որ Հայոց եկեղեցականաց դէմ հնարել մուսնան մեր Ազգը եւ եզրայրները խրանեցնել սառեցնելոյ համար, եւ այսպիսի պաշտօն եւ ջանքեր արդարեւ միայն եւ մի միայն դասալիք գիմակաւորներու յանուկ են եւ կվայելեն:

Ասացէք այն կարեկցութեան արժանի ողորմելի անձանց, ասացէք պարզապէս, որ եթէ դասալիք չեն եւ ոչ գիտմամբ կանեն՝ թէեւ իսպառ վայրապար

ինչ որ կհնարեն եւ կհօգտակեն, թող դադարին զրաւաստակ եւ անիրաւ վայրաբանութիւններէն, թող դադարին Հայոց եկեղեցականաց դէմ զինուելէն, թող դադարին Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ դէմ դաւաճանելէն, թող դադարին եւ զգուշանան Ս. Էջմիածնի դէմ՝ յարձակուելէն, թող դադարին Ս. Էջմիածնում՝ ձեռնարկուած ամենայն բարենրպատակ հաստատութեանց՝ ինչպէս նաեւ ձեմարանի դէմ՝ դաւաճանելէն, եւ չն եւ չն, եւ թող քաջ գիտնան՝ որ առանց միմեանց գոյութիւն եւ յարատեւ ապահովութիւն չունին եւ ոչ ունենալ կարող են Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցին, Կրօն, Ազգն, միանգամայն Հայոց եկեղեցական պաշտօնեայք, հետեւաբար Հայոց եկեղեցական վարչութեան եւ պաշտօնէից իրաւասութեանց կամ արտօնութեանց մի նշանախեցի համար անգամ անտարբեր կենալն աններելի դաւաճանութիւն է՝ թող թէ ջնջել:

Հասկացա՞ք:
Սակայն գուցէ ականջներդ խցէք՝ որ չլսէք: Հող չէ: Եթէ կամիք՝ շարունակեցէք, բայց եթէ սիրտ ունիք՝ գիմակներդ վերուցէք եւ այնպէս ասպարէզ յաճախեցէք՝ որ մեք եւս աւելի պարզ խօսիմք: Թէեւ ձեզ պէս գիմակաւոր դասալիքները միշտ եւ ամեն ուրիք կը ձանաչուին:

Վ. Ե. Մ.

